«Հայաստան. բռնությունը շարունակվում է»

Այսպես է վերնագրել իր տեղեկատվությունը *«Բալտիսկայա վրեմյա»* թերթի թղթակից Ցանա Ռուբինչիկը. անդրադառնալով Լատվիական հանրապետության ժողովրդական պատգամավորներ Տ. Ցանցիսի եւ Օ. Կոստանդայի մամլո ասուլիսին: Վերջիններս Լատվիայի Գերագույն խորհրդի պատվիրակության կազմում ժամանել են Երեւան, ծանոթացել սահմանամերձ գոտում եւ Արցախում տիրող իրավիճակին: Հաղորդման մեջ նշվում է, որ թեեւ պրեզիդենտ Գորբաչովը մայիսի 16-ին հայտարարել է, թե տեղահանումն անթույլատրելի է, սակայն այն սկսվել եւ իրագործվել է ոչ միայն Ադրբեջանի հայաբնակ շրջաններում, այլեւ Արցախում: Պատգամավորները նշել են, թե Հայաստանի դառն օրինակը հուշում է՝ պետք է անհապաղ ստեղծել ինքնապաշտպանության համակարգ:

մամուլի տեսությունը պատրաստեց

ՅԱԿՈԲ ՍՍՍՏՐՅԱԼԸ